107 Կանձկամ ավելի Փրկչիս նմանիլ,

1. Կանձկամ ավելի Փրկչիս նմանիլ,
Ավելի խոնարհ ու հեզ գտնվիլ,
Ավելի փոյթով գործել Իրեն համար,
Ավելի նվիրված՝ կամքին անդադար:

Մռ, Տեր, իմ սիրտս, թող Քուկդ ըլլամ միայն,
Մռ, Տեր, իմ սիրտս, Քեզ համար պահե զայն,
Մաքրե զիս, Տեր, խնդրեմ, ամեն մեղքե,
Հավիտենապես, Տեր, սրբե՛ ու մաքրե՛:

2. Աղոթքս է՝ նմանիլ Փրկչիս ավելի,
Կարենալ կրել խաչս քաջարի,
Ավելի փնտրել Իր թագավորություն,
Սուրբ Հոգովն դարձնել մոլորյալներն Իր տուն:

3. Կանձկամ ավելի ապրիլ Փրկչիս պես,
Մարդոց միշտ հայտնիլ սիրտն Իր սիրակեզ,
Ուրանալ անձս սրտով հույժ սիրալի,
Կանձկամ նմանիլ Փրկչիս միշտ ավելի: